

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տեխնիկական և արուեստագիտական կրուրիւն: — Տեխնիկական և արուեստագիտական կրուրեան նույնուած ուսու գործիչների լի համաժողով: — Պարզութեան լի համաժողովը: — Հիմանդրուրիւնների կախումը հասարակական-պետական պայմաններից: — Մանաւոր պրակտիկան և բժշկական օգնութեան հասարակական կազմակերպուրիւն: — Շիստաւոր դասակարգերի բնակարանային հարցի առիրով: — Էժան բնակարաններ կառուցող մի նոր ընկերություն:

Բարձրագոյն հրաման Ցվերեան և նովոտրվեան զեմանվոների մասին: — «Արա. Ենտ.» այդ առիրով: — Բարձրագոյն հրաման գիւղացիական օրենսդրութեան վերանուրեան մասին: — Պետական երեւնութիւն հաջնիկիով 1904 թ. համար: —

+ Վելիչո:

Կովկասում ուսու գաղրականներին յանացանուելիք հողերի չափը. — Դատաստանական վճիռներ երեւանում և Շուշում. — Բարձրագոյն հրաման Թարումուն առողջապահուրեան վերաբերեալ որոշումներ հասարակելու համար Կովկասի հանագարչապետին լիազօրուրիւններ տարու մասին: — Բարձրագոյն հրաման Հայ-Լուսաւորչական հոգեւոր վարչուրեան պաշտօնեաններ Աշխակելու հարգի մասին: — Էջմիածնի սինոդի նոր պրոկուրոր:

Նաւրը Անդրկասպեսան երկրում. — Անդրկասպեսան ուսու գաղրականների և էկուոր պարականական կազմակերպուրիւնների մասին կարգադրուրիւն:

Կարգադրուրիւններ Գինըանդիայի վերաբերեալ:

Մամուլի վերաբերեալ տեղեկուրիւններ:

Մուս ինտելիգենցիայի լաւագոյն ներկայացուցիչների ձգուումները արտայայտութիւնն են գտնում ոչ միայն առաջադէմ մամուլի մէջ, այլ նաև այս կամ այն հասարակական հարցի առիթով տեղի ունեցած ժողովներում: Այդպէս՝ օրինակ՝ զեմստվային ժողովներում և զամազան ընկերութիւնների համաժողովներում կարելի է զաղափար կազմել ուսու լաւագոյն մարդկանց տենչերի մասին: Հէնց այդ տեսակէտից շատ հեծառքքրական են վերջին ամսում Պետերբուրգում գումա-

բուած երկու համաժողովները, որոնց մասին կամենում ենք գաղափար տալ մեր ընթերցողներին:

Դեկտեմբերի 26-ից մինչև յունուարի 4-ը շարունակում էին տիխնիկական և արուեստագիտական (պրոֆեսիոնէլ) կրթութեան ռուս գործիչների համաժողովի նիստերը:

Տեխնիկական և արուեստագիտական դպրոցները նորագոյն ժամանակների արգասիք են, արդիւնաբերութեան և առևտորի հոկյայական զարգացումը, օրէցօր սաստկացող միջազգային մրցութիւնը և իրար յաջորդող ամեն տեսակ կատարելագործութիւնները անհնարին են դարձնում առանց որոշ մասնագիտական պատրաստութեան աջողութեամբ մաքառել գործնական կեանքի մէջ: Այդ նոր տիպի կրթութեան հաստատութիւնների լաւագոյն կազմակերպութիւնից է կախուած որոշ հանգամանքներում ազգերի տնտեսական առաջադիմութիւնը: Եթէ օրինակի համար վերցնենք Գերմանիան և Անգլիան, ուր հասարակական կեանքի ազատութիւնը տալիս է այդ մրցող ազգերին համարեա հաւասար պայմաներ, մենք կը տեսնենք, որ այնուամենայնիւ միջազգային առևտորի մէջ Գերմանիան սկսել է յետ վանել իր հակառակորդին առաջնակարգ դիրքից: Անզվացիները քննեցին իրանց պարտութեան պատճառը և գտան, որ Գերմանիան յալթում է իր տեխնիկական և պրոֆեսիոնէլ կրթութեան առաւելութիւնների շնորհիւ...»

Միայն վաթսունական թւականներից սկսեցին հիմնուել այդ նոր տիպի ուսումնարաններից և Ռուսաստանում: Առանձին զարկ տուին կրթական այդ նոր ճիւղին երկու ընկերութիւններ. Կայսերական Տեխնիկական Պետերբուրգում (հիմն. 1866 թ.) և Տեխնիկական գիտութիւններ տարածող ընկերութիւնը (հիմն. 1869 թ.) Մոսկուայում: Առաջինը բազմաթիւ ճիւղեր ունի Ռուսաստանի զանազան քաղաքներում, իրաւունք ունի դպրոցներ բանալ և համաժողովներ գումարել: Տեխնիկական և պրոֆեսիոնէլ կրթութեան ռուս գործիչների համաժողովը հէնց այդ ընկերութիւնն է հրաւիրել:

Յունուարի 4-ին բացուեց Պիրոգովեան Խ բժշկական համաժողովը, որին մասնակցում էին աւելի քան երկու հազար անդամներ: Պիրոգովեան համաժողովում ևս նկատելի էր ռուս լաւագոյն ինտելիգենցիայի ներկայ տրամադրութիւնը. այդտեղ ևս հարցերը ստանում էին լայն հասարակական պարզաբանութիւններ: Զուտ գիտական նշանակութիւն ունեցող զեկուցումների հետ, —ինչպէս օրինակ՝ «իբս ճառագայթների Փիզիոլոգիական ազդեցութիւնը առողջ մարդկանց վրայ», «մալերիայի մոծակային թէորիան», «բաղիօակտիւ ճառագայթների

Նշանակութիւնը բիօլոգիայի և բժշկականութեան մէջ» ևայլն. — քննութեան էին ենթարկուած հասարակական բժշկականութեան շատ հիմնական հարցեր: Առաջ բերենք այդ վերջին հարցերից մի երկուաը գաղափար տալու համար թէ ինչ ոգով էին որոշում-ներ կայացնուում այդ համակրելի համաժողովում:

Մի զեկուցման մէջ դրուած է եղել այն հարցը, թէ «ի՞նչ ազգեցութիւն ունի մասնաւոր պրակտիկը բժշկութեան ամբողջ գործի զարգացման վրայ», հարց, որին մասսամբ նուիրուած էր մի քանի տարի առաջ և Վ. Վերեսակի «Ճառաւու երացա աղմիայոյզ գիրքը: Համաժողովը գտնուամ էր, որ բժշկի աշխատանքը վարձասրելու ներկայ սիստեմը՝ իր հիմքում հակասում է հիւանդի բժշկելու գործին. հիւանդից անմիջապէս վարձ ստանալը պէտք է վնասակար ազդի բժշկի բարոյականութեան վրայ. հիւանդը բժշկի համար դառնում է ապրուսափ աղբիւր, յաճախ հարստանալու միջոց, իսկ այդ բանից անխուսափելի է՝ որքան կարելի է շատ հիւանդներ ունենալու ցանկութիւնը, բեկլամների և այլ տգեղ միջոցների դիմելը և այլն: Զարիքի դէմ մաքանելու համար պէտք է որ բժշկական օգնութիւնը ամենուրեք լինի հասարակական, իսկ բժշկի և հիւանդի մէջ անմիջական դրամական յարաբերութիւնները պէտք է վերացուեն: Այդպիսով ազգաբնակութեան բժշկական օգնութիւն մատակարարելու գործի կազմակերպութիւնը ընկնում է պետութեան և հասարակական հիմնարկութիւնների վրայ... Ի դէպ է այստեղ նկատել, որ այդպիսի տեսակէտ արծարծուած էր մեր կողմից ևս մի բանակուում (1898 թ. «Մշակ»)... Համաժողովը, բացի այդ, գտնում էր, որ արդէն հասցած պէտք է համարել այն օրէնքը (յօդ. 872), որ բժշկի գործունէութեան մէջ ստիպողական տարր է մացնում \*). Նա դէմ էր հասարակական ծառայութեան մէջ եղած բժիշկներին արծակելու մասին գործադրուող կանոնների և անարժան էր համարում հասարակական հիմնարկութիւնների համար՝ բժշկին ծառայութեան մէջ ընդունելիս ի նկատի ունենալ նրա ծագումը, դասանութիւնը... Շատ ուրիշ հարցերի հետ ըննած էին նաև քաղաքների առողջապահական բարեկարգութիւններին վերաբերեալ բազմաթիւ բարդ խնդիրներ՝ զարձեալ նոյն լայն մարդասիրական և առաջադիմական զգացմունքներով տոգուրուած: Անշուշտ ուշադրութիւնից սպրդած չէր լինի նաև բնակարանային հարցը:

\* ) Հետաքրքրական է այդ տեսակէտից էլ ներկայ համարում Զելովի պատմուածքը:

Թէ որքան դժուար է մեծ քաղաքներում չքաւոր մարդկանց համար յարմար և առողջ բնակարաններ գտնել, այդ գիտէ ամեն մի ոչ-բուրժուատ: Յայտնի է, որ տանտէրերը իրանց տան պաստառները և յատակները չափազանց գուրգուրանքով պաշտելով՝ յաճախ մերժում են բնակարան տալու երեխաններ ունեցող ընտանիքներին: Երկու տարի առաջ Պարիզում մի տանտէր բնակարանից հեռացրեց մի ընտանիք, որ դժբախտութիւն էր ունեցել աւելացնելու իր անդամների թիւը նորածինով: յուսահատուած հայրը ատրճանակ արձակեց հրէշ տանտէրի վրայ, և դատարանը արդարացրեց այդ յանցանքը... Կարելի է շատ սրտաճմլիկ դէպքեր պատմել տանտէրերի և բնակարան որոնող տնազուրկների յարաբերութիւններից, բայց այդ մեզ հետո կը տանէր: Զարիզը համատարած է, սակայն այն տարբերութեամբ, որ Եւրոպայում վաղուց թէ պետութիւնը, թէ հասարակութիւնը, թէ մարդասիրական ընկերութիւնները և թէ բանկերը օգնում են էժան և յարմար բնակարաններ կառուցանող ընկերութիւններին, մինչդեռ մեզնում է որ միայն նոր-նոր են սկսում մտածել այդ պալլիատիւով մեղմացնել չքաւոր աշխատաւորների կեանքի դառսութեան գէթ մի կողմը:

Լրադրներից իմանում ենք, որ Պետերբուրգում ոչ միայն հիմնուել է, այլ սկսել է իր գործունէութիւնը էժան և յարմար բնակարաններ շինող մի ընկերութիւն: Այդ ընկերութիւնը արդէն ձեռք է բերել մի կտոր հող քաղաքի այն մասում, ուր ամենից շատ է ապրում չքաւոր մշակ դասակարգը, և գարնան սկսելու է շինութիւն կառուցանել: Մտադրութիւն կայ շինել և փոքրիկ բնակարաններ մէկ, երկու, երեք սենեակից բաղկացած, առանձին-առանձին խոհանոցներով: Ընկերութիւնը որոշել է մի սենեականոց բնակարանը խոհանոցով վարձու տալ ամսական 8 ր. 50 կոպէկով, երկու սենեակ և խոհանոցը —ամիսը 10—13 ր. 80 կ., իսկ երեք սենեակի և խոհանոցի բնակարանը (11,40 քառակուսի սաժէն) 16—17 ր. 25 կ. ամիսը, վառելիքով: Ընկերութեան դրամագլուխը այժմ համաստ է 158,375 ր... Ի՞նչն է խանգարում, որ նման ընկերութիւններ կազմուեն նաև թիֆլիս, Բագու, ուր յարմար և էժան բնակարանների բացակայութիւնը պակաս զգալի չէ աշխատող և անապահով դասակարգերի համար: Բնականաբար տանտէրերին այդ ձեռնուտու չէ, հետևաբար նախաձեռնութիւնը պէտք է ծընուի տնազուրկ և չքաւոր ինտելլիգենտ խսւերում: Ցանկանանք, որ այդ գաղափարը արծարծուի և ձգտի շուտ իրագործուել նաև մեր կեանքում:

լ. Ս.

—Բարձրագոյն հրաման, որ ներքին գործերի մինիստը յայտարարել է կառավարիչ սենատին, ներքին գործերի մինիստը և տվերեան նահանգապետին՝ տվերեան զեմստվօի վերաբերմամբ առանձին լիազօրութիւններ տալու մասին ներքին գործերի մինիստը մտել է նորին կայսերական Մեծութեան մօտ ամենահպատակօրէն զեկուցումով, որի մէջ ենթադրում էր. 1) իրաւունք տալ իրան մինիստրին՝ նշանակել ներկայ եռամենակի համար տվերեան նահանգական և նովոտորգեան գաւառական զեմստվային վարչութիւնների նախագահներ և անդամներ՝ առանց երկրորդ անգամ ընտրութիւններ կայացնելու, որպէս թելադրում է զեմստվային հիմնարկութիւնների մասին եղած Օրէնսդրութիւնը, փոխելով դրա հետ միասին տվերեան նահանգական և նովոտորգեան գաւառական զեմստվային ենթադրուող արտակարգ ժողովները. 2) 1904 թւականի համար պահպանել տվերեան նահանգական զեմստվային ամսեալ տարւայ նախահաշիւը և ծախսերի բաշխումը, որպէսզի նրանց փոփոխելու կամ լրացնելու դէպքում՝ ներքին գործերի մինիստը հարցնէ այդ բանի համար Բարձրագոյն բարեհաճութիւն այն կարգով, որ սահմանուած է զեմստվային հիմնարկութիւնների մասին եղած Օրէնսդրութեան 94-րդ յօդուածով. 3) տվերեան նահանգական և նովոտորգեան գաւառական զեմստվային ժողովների քննութեան ենթարկուող ընթացիկ գործերը լուծել նոյն Օրէնսդրութեան 95-րդ յօդուածում մատնացոյց արած կարգով. 4) ներքին գործերի մինիստը իրաւունք տալ արգելելու Տվերեան նահանգի սահմաններում կամ նրա առանձին տեղերում այնպիսի անձերի մնալը, որոնք վնասակար ազդեցութիւն են անուամ զեմստվային վարչութեան ընթացքի վրայ. 5) տվերեան նահանգապետին իրաւունք տալ հեռացնելու զեմստվային ծառայութիւններից հասարակական կարգի և անդորրութեան համար վնասակար անձերին, որոնք գտնուամ են ծառայութեան մէջ զեմստվային վարչութիւնների և նրանց նախագահների հրաւէրով կամ նշանակելով; Այս ամենահպատակօրէն զեկուցման վրայ նորին կայսերական Մեծութեանը հաճոյ է եղել 1904 թւի յունուարի 8-ին Մեփական ձեռքով գծել. «Համածայն եմ»:

—Տվերի նահանգի զեմստվօական հիմնարկութիւնների գործունէութիւնը վաղուց արդէն ուշադրութիւն է դարձնել տալիս իր վրայ պետական կարգերի պահանջներին չհամապատասխանող իր ուղղութիւնով; Այդ ուղղութեան մասնաւոր և առանձնապէս խիստ արտայայտութիւնների մասին շատ անգամ հաղորդուած է Բարձրագոյն ուշադրութեան և դրանց ո-

չընչացնելու համար առանձին կայսերական ցուցումներով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկուել են: Ժամանակաւոր թարմութիւն մացնելով զեմստվօի գործիչների մէջ՝ այդ միջոցները սակայն չկարողացան զեմստվօին բերել ուղիղ ճանապարհի: Վերջին տարիներս Տվերի նահանգական զեմստօի վնասակար ուղղութիւնն աւելի ևս խստացաւ՝ արտայայտուելով ի միջի այլոց, զեմստվօական ժողովներում անտեղի խորհրդածութիւններով, որոնք ապարդիւն կերպով վրդովում էին ստքերը, և մշտապէս ձգտելով տեղական իշխանութեան հակառակ գնալ, թէն դա պարզապէս վնաս էր գործին:

Դրա հետ միասին Տվերի նահանգում երկան եկան օրինազանցութիւններ նոյնիսկ զեմստվօական հիմնարկութիւնների կազմութեան մէջ: Նրա կազմում աստիճանաբար առաջացել էին օրէնքով չնախատեսած ինքնուրոյն գործադրի հիմնարկութիւններ, ինչպէս առանձին յանձնաժողովներ և խորհուրդներ, որոնք կազմուած էին գլխաւորապէս ազատ վարձով ծառայող անձերից: Այդպիսի յանձնաժողովներ կազմում էին իրթէ զեմստվօական խորհուրդներին օժանդակելու, բայց ժամանակի ընթացքում անմիջապէս նրանց ձեռքում կենտրոնացան զեմստվօի տնտեսութեան առանձին ճիւղերի վարչութիւնը, և այդպիսով զեմստվօի գործերի ուղղութեան մէջ իսկական իշխանութիւնը կամաց-կամաց անցաւ այն մարդկանց ձեռքը, որոնք ծառայում էին ազատ վարձով զեմստվօի մէջ և ոչնչով կապուած չէին արուած տեղի հետ: Միաժամանակ այդ անձերի մէջ երկաց մի տեսակ կազմակերպուելու և ընկերութիւն կազմելու ձգտում, մի ընկերութիւն, որի մէջ մտնելու թոյլ էին արուած միայն այնպիսի մարդիկ, որոնք իրանց գաղափարակից էին:

Յիշուած երկոյթը և նրա հետ կազմուած ոչ ցանկալի հետևանքներն առանձին ուժով զգացուեցին զեմստվօի ժողովը դական կրթութեան վերաբերող գործունէութեան մէջ: Կրթական վարչութիւնը յաճախ հաղորդում էր ներքին գործերի մինիստրին, որ Տվերի նահանգի զեմստվօներում, խորհուրդների կողքին առաջ են եկել առանձին խորհուրդներ՝ ժողովրդական ուսուցիչների և վարժունիների մասնակցութեամբ, այդ բանը դժուարացնում է այդ նահանգում պետական կրթական վարչութեան վերահսկողութիւնը: Այսպէս՝ նովուրագեան գաւառական զեմստվօի վարչութեան մէջ ժողովրդական ուսուցիչների ցանկութեան համաձայն 1903 թւին կազմուել է նրանց մասնակցութեամբ մի կոմիտետ, որ իր գործունէութիւնն ան-

միջապէս սկսեց կոմիտետի մեծամասնութեան անհաճոյ ուսուցիչների հեռացնելու համար միջոցներ ձեռնարկելով։

Կրթական Վարչութեան յայտարարութիւնները նովուորուգիան գաւառական զեմստվօի դէպի ժողովրդական լուսաւորութիւնն ունեցած անկանոն յարաբերութեան մասին լիապէս հաստատուեցին Տվերի նահանգի զէմստվօական հաստատութիւնների գործունէութեան այն ընդհանուր քննութեամբ, որ Բարձրագոյն հրամանով կատարեց հոփմայստեր Շառուբերն անցեալ տարուայ վերջին, նոյնպէս և ոստիկանական դեպարտամենտը հասած տեղեկութիւններով։

Պարզուեց, որ գործադիր, մասամբ էլ կարգադիր իշխանութեան խորհուրդների վարչութիւնից ազատ վարձով ծառայող անձերից կազմուած հաստատութիւնների ձեռքն անցնելով և այս վերջիններիս ազդեցութեան զօրանալովը զեմստվօնների գործերի վրայ, մասնաւորապէս ծտույողներ վարձելու և արձակելու վրայ, առաջացրեց այն, որ Տվերի զեմստվօնների ծառայողների մէջ սպրդուեցին նշանաւոր չափով այնպիսի մարդիկ, որ քաղաքականապէս անվատահելի են Այս բանում առանձին ուշադրութեան արժանի է ժողովրդական ուսուցիչների կազմը, չնայելով որ ժողովրդական դպրոցի տեսուչը չէ հաստատել կոմիտետի առաջարկած թեկնածուների մօտ  $40^{\circ}/\circ$ -ը իբր ուսուցիչ զեմստվօնների դպրոցների համար։ Այդ տեսակ անձերի այդպիսի գերակշռութիւնը յիշած գաւառում բնականարար ծնեցրեց ձգտում դարձնել դպրոցական դասաւորութիւնը պրոպանդանդայի գործիք ոչ միայն գոյութիւն ունեցող պետական և հասարակական կազմի դէմ, այլև կրօնի դէմ։ Բընագիտական ընթերցանութիւնների ժամանակ քարոզում էին այն միտքը, թէ Աստուած չկայ, և թէ բնութեան մէջ գոյութիւն ունեն միայն բնական ուժերի ազդեցութիւնը ևայլն։ Ի միջի այլոց նովուորգեան գաւառի ժամովական ուսուցիչներից մէկի բնակարանում գտնուել է յեղափոխական հրատարակութիւնների պահեստ, միաժամանակ պարզուել է, որ այդ հրատարակութիւնները ժողովրդական ուսուցիչները տարածելիս են եղել աշակերտների մէջ և նրանց միջոցով էլ հասակաւոր ազգաբնակութեան մէջ։ Բացուել է, որ ուսուցիչներն աշակերտներին կարգում էին այնպիսի գրական գործեր, որոնցով կարելի է մտքերը զրգուել կառավարութեան և Եկեղեցու դէմ, իսկ դպրոցներում գործածուելու թոյլատրուած գործերի ընթերցանութիւնը տեղի էր ունենում այնպիսի բացարութիւններով, որոնց նպատակն էր լուղների ուղեղում ամրապնդել հակապետական հայեացքներ և խախտել կրօնի և բարոյակա-

Նութեան սկզբունքները. օրինակ՝ Պուշկինի «Կապիտանի Աղջիկը» վէպի ընթերցանութեան ժամանակ ցոյց են տրուել մոռական լապտերով պատկերներ, որոնց նիւթն է եղել աղնւականներին կախելը ապստամբ ամբոխի ձեռքով, և դրան համապատասխան բացատրութիւններ են տեղի ունեցել: Թէ որքան կամակոր կերպով էր առաջ քշում կրթութեան այդ փշացնող ուղղութիւնը՝ երևում է նրանից, որ ժողովրդական դպրոցների աշակերտների դասարանական տեսրակներից շատերի մէջ, իրանց աւանդուած դասերի համառոտագրութիւններում երեացել են վրդովեցուցիչ և յանդուցն ու լկակի դատողութիւններ եկեղեցու և հոգևորականութեան մասին:

Տվերի նահանգի մի քանի մասերում դպրոցական գործի այդ տեսակ վիճակի ժամանակ նշանաւոր է հանդիսանում նահանգական զեմստվօի ժողովի անցեալ տարուայ որոշումը դպրոցական գործի առիթով Տվերի գաւառում: Առանց որևէ առանձին հիմքի քննութեան առնելով Տվերի գաւառական զեմստվօի խնդիրը՝ գաւառի զեմստվօական դպրոցները հոգևոր վարչութեանը յանձնելու մասին՝ նահանգական զեմստվօի ժողովը որոշեց յիշուած զեմստվօի վերաբերութեամբ ձեռնարկել մի շարք պատողական միջոցներ, այսինքն՝ դպրոցները հոգևորականութեան յանձնելու օրից սկսած այլևս այդ գաւառին չըտալ գեղեցի և դպրոցական պիտոյքների համար փոխառութիւն, անմիջապէս յետ պահանջել այն բոլոր փոխառութիւնները, որ տրուել են դպրոցական շէնքեր կառուցանելու դրամագլխից ևայլն, դրա հետ միասին, ինչպէս յիշուած է ժողովից հաստատուած զեկուցագրում, զեմստվօի ժողովը լիապէս հասկանում էր, թէ այդ առաջարկուած միջոցները որքան ծանր ազդեցութիւն կ'ունենային Տվերի գաւառի ազգաբնակութեան վրայ:

Այդ բոլորը միացած այն հանգամանքի հետ, որ 1904-1906 թւի եռամենակի Տվերի նահանգական և նովօսորդի գաւառական զեմստվօների նորընտիր կազմը հիմք չէ տալիս յուսալու, որ յիշուած տիսուր երևոյթները կը փոխուեն, և որ Տվերի վերջին զեմստվօի հերթական ժողովը՝ ժամանակ գտնելով գաւառական զեմստվօի յիշուած խնդիրքը մանրամասնորէն քննելու համար՝ իր զբաղմունքների համար որոշուած պայմանաժամկից առաջ ցըռուեց, չձեռնարկելով 1904 թւականի հաշւեկշռութիւնը ներքին գործերի մինիստրին անհըրաժեշտորէն ստիպեց նորին Կայսերական Մեծութեան ամենահպատակ զեկուցում տալու Տվերի նահանգի զեմստվօական հիմնակութիւնների գործունէութիւնը կարգաւորելու առանձին

միջոցներ ձեռք առնելու համար։ Այդ զեկուցագրի առիթով Բարձրագոյն հրամանը կայացաւ ներկայ յունուարի 8-ին։ Հեռացնելով Տվերի նահանգի գեմատվօների գործերի կանոնաւոր ընթացքը խանգարող ամենագլխաւոր պատճառները, Բարձրագոյն հրամանում ցոյց տրուած միջոցները կարող են դիւրացնել զեմստվօական հաստատութիւնների մէջ և տալ նրանց գործունէութեանը օրէնքի և ազգաբնակութեան էական կարծիքներին համապատասխան ուղղութիւն։

—Բարձրագոյն ուկազ. «Դիտակցելով, որ 1861 թւի փետրուարի 19-ի օրէնքները, որոնք գիւղական հասարակութեանը տալիս են անձնական ազատութիւն և ապահովում նրա հողային կազմակերպութիւնը, գիւղական վերանորոգուած կեանքի մի քանի կողմերը թողել են առանց օրէնսդրական որոշման, Մենք հրամայեցինք վերաքննել գիւղացիների մասին գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնը։ Այս վերաքննութիւնը Մենք հաճոյ համարեցինք կատարել 1861 թւի վերակազմութեան գլխաւոր սկզբունքների հողի վրայ, յիշած վերաքննութեան հիմք դնելով՝ ինչպէս ասել ենք 1903 թ. փետրուարի 26-ի մանիքեստում՝ գիւղական հողատիրութեան համայնական կազմի անձեռնմխելութիւնը՝ առանձին գիւղացիներին համայնքից գուրս գալու միջոցները հեշտացնելու պայմաններով։ Այս նախագիծն առաջ տանելու համար Մենք անհրաժեշտ համարեցինք, որ սրա հետ միասին գիւղացիները պահպանեն դասակարգային կազմը և գիւղական հողատիրութեան անձեռնմխելութիւնը։ Մը կատարման համար այժմ վերջացած են՝ ներքին գործերի մինիստրութեան նախնական պարզաբնումով՝ գիւղացիների համար նոր օրէնսդրութիւնների ծրագիրներ, որոնք նոյն Մեր մանիքեստի նախացուցումների համաձայն՝ պէտք է տրուեն նահանգական խորհրդակցութիւններում գտնուող տեղերին կըրկին մշակելու և գիւղական առանձնայատկութիւնների հետ համաձայնեցնելու համար։ Այս պատճառով հրամայում ենք. 1) նահանգական խորհրդակցութիւններ կազմակերպել գիւղացիների մասին օրէնսդրութեան վերաքննութեան համար այն նահանգներում, որոնցում մտցրուած է զեմստվային կառավարիչների մասին Օրէնսդրութիւն, այլև Կիւկի, Վոլըինսկի և Պոդոլ'սկի նահանգներում։ 2) նահանգական խորհրդակցութիւննը կազմակերպուած է՝ նահանգապետի նախագահութեամբ ազնւաւկանութեան նահանգական պարագլանից, քաղաքացիական կառավարութեան տեղական վարչութեան կառավարիչներից, նահանգական քաղաքում գտնուող շրջանային դատարանի՝

խագահից, նահանգական ատեանի անփոփոխ անդամից կամ գիւղացիական գործերի նահանգական ատեանի վարչութեան անդամից ըստ արժանուոյն, նահանգական զեմստվային վարչութեան նախագահից, ազնւականութիւն և զեմստվոի ներկայացուցիչներից, զեմստվային իշխանաւորներից չորսից ոչ պակաս, այլև այն անձերից, որոնք իրանց փորձով կամ գիտութեամբ կարող են նպաստել խորհրդակցութեանը յանձնուած խնդրի աջողութեանը. 3) ազնւականութիւնից անդամներ հրաւիրում է նահանգապետը՝ ազնւականութեան պարագլուխների և պատուիրակիների ցուցումներով, մի գաւառից ոչ պակաս մի անդամից. այն նահանգներում, ուր չկայ ազնւականութեան ներկայացուցչութիւն, նահանգապետները ազնւականութիւնից անդամներ են հրաւիրում ազնւականութեան նահանգական ներկայացուցիչների համաձայնութեամբ, ուր կան այդպիսիներ. 4) զեմստվոից անդամներ է հրաւիրում նահանգապետը գաւառական զեմստվային ձայնաւորների կազմից՝ գաւառից մի մարդ. 5) նահանգական խորհրդակցութիւնների իրանց վրայ դրած գործը քննելու կարգը, այլև գործավարութիւնը նրանց մէջ, որոշում է ներքին գործերի մինիստրի ինստրուկցիայով. Կառավարիչ սենատին հարկաւոր կարգադրութիւններ անել սրա կատարման համար»: Խոկականի վրայ նորին կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է. «Նիկոլայ»: «Յարսկօիէ Սելօ-ում, 1904 թւի յունուարի 8-ըդ օրը»:

**Պետական հասոյթների եւ ծախքերի ընդհանուր հաշեկշիռը 1904 թականի համար:**

### ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՅԹՆԵՐ

#### I

##### Սովորական հասոյթներ

1. Ռուգակի հարկեր . . . . .	135,138.477 բուրլ.
2. Կողմակի հարկեր . . . . .	141,157.100 "
3. Մաքս . . . . .	103,581.232 "
4. Պետական մենաշնորհներ . . . . .	589,851.300 "
5. Աքունական կայքեր և դրամագլուխներ . . . . .	560,953.841 "
6. Պետական կայքերի օտարացուցումը . . . . .	505,573 "
7. Ցետ գնման վճարներ . . . . .	86,164.300 "
8. Պետական գանձարանի ծախքերի հատուցում . . . . .	76,231.206 "
9. Այլայլ հասոյթներ . . . . .	6,481,464 "

**Սովորական հասոյթների գումար 1,980,094.493**

## II

## Արտակարգ աղքիւրներ

10. Մշտնջենական աւանդ Պետական բանկում . . .	2,750,000 լուրպի
	1,982,844,493 "
Պետական գտնաբառում պատրաստի ազատ դրամ . . .	195,792,562 "
Համագումար . . . . .	2,178,637,055 "

## ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽԹԵՐ

## I

## Սովորական ծախսներ

1. Պետական պարագի վճարներ . . . . .	289,299,183 "
2. Բարձրագոյն պետական հիմնարկութիւններ . . . . .	3,529,111 "
3. Սրբազնագոյն սինոդի վարչութիւն . . . . .	29,331,890 "
4. Կայսերական Դրան մինիստրութիւն . . . . .	16,127,920 "
5. Արտաքին գործերի . . . . .	6,417,790 "
6. Զինուրական . . . . .	360,758,092 "
7. Եռովյաշին . . . . .	113,622,426 "
8. Փինանսների . . . . .	372,122,649 "
9. Երկարագործութեան և պետ. կալուածների . . . . .	49,829,102 "
10. Ներքին գործերի . . . . .	114,727,078 "
11. Ժրդուրդ. լուսաւորութեան . . . . .	43,677,451 "
12. Հաղորդակցութիւնների . . . . .	473,274,611 "
13. Սուհար. ծավագնացութեան և նախահան. գլխ. վարչութիւն 16,547,466	"
14. Արդարագատութեան մինիստրութիւն . . . . .	51,082,938 "
15. Պետական կոմտրոլ' . . . . .	8,993,809 "
16. Պետական ձիարութեան գլխ. վարչութ. . . . .	2,116,735 "
	1,951,458,251 "
17. Զօրքի պաշարի և բանակի ձիերի կերի թանգանալու դէքըռում . . . . .	3,000,000 "
18. Նախահաշխներով չնախատեսուած ծախքեր տար-այ ընթացքում արտակարգ պէտքերի համար. . . . .	12,000,000 "
Սովորական ծախքերի գումարը	1,966,458,251 "

## II

## Արտակարգ ծախսներ

19. Միքերի երկաթուղու կառուցման վրայ . . . . .	17,150,965 "
20. Միքերի. երկաթուղու կառուցման հետ կապուած. . . . .	4,412,114 "
օժանդակիչ ձեռնարկութիւնների վրայ . . . . .	
21. Այլ երկաթուղիների կառուցման վրայ . . . . .	125,635,725 "
22. Մասնաւոր ընկերութ. նպաստ երկաթուղ. շինելու համ. 62,980,000 "	
23. Մասնաւոր անձանց հիմնարկութիւնների կայքային իրա- տունքների բարձման համար . . . . .	2,000,000 "
Արտակարգ ծախքերի գումար	212,178,804 "
Համագումար	2,178,637,055 "

Ուրեմն սովորական և արտակարգ հասոյթների համագումարը մարզ հաւասար է 1,982,844,493 բուգ. Խոկ ծախքերի համագումարը 2,178,637,055 Պակասող 195,792,562 ամլին պէտք է ծածկով պետական զանձարանում պատրաստի ազատ գումարից, որ հաւասար է 195,792,562 բ.:

—«Ռյուսկի Ենթօմոսի» լրագիրը հետևեալ անաշառ մահցուցակն է տպել Վ. Լ. Վելիչկօի մասին. «Դեկտեմբերի 30-ին մեռաւ բանաստեղծ և ժուրնալիստ Վասիլիյ լ'վովիչ Վելիչկօն։ Հանգուցեալը ծագում էր ազնւական տոհմից, ծնուել է 1860 թ.։ Աւարտելով օրինագիտական դպրոցի դասընթացը՝ Վ. Լ. Վելիչկօն իրան նուիրեց գրական գործունէութեան. նրա ոտանաւորները երեռում էին «Նովօհէ Վրեմիա»-ում, «Ներելիա»-ում, «Սեվերնըից Վեստնիկ»-ում, «Վեստնիկ Ելրուպըի»-ում, «Ռուսակայա Մըրսիւլ»-ում ևայլն. 1890 թ. դուրս եկաւ նրա ոտանաւորների և պիեսների ժողովածուն «Արևելեան մոտիւներ» վերնագրով։ Վ. Լ. Վելիչկօի գրչին է պատկանում ի միջի այլոց ոչ անյայտ «Առաջին ճանճ» գրամատիկական էտիւդը։ Ապա Վ. Լ. Վելիչկօն իր գործունէութիւնը տեղափոխեց Կովկաս, ուր «Կաւկազ» պաշտօնական թերթի խմբագիր-հրատարակիչ էր, որը նրա խմբագրութեամբ ընդունեց այնքան վառնացիոնալիստական գոյն, որ Վելիչկօին այդ պաշտօնում մնալն այլև անյարմար դարձաւ։ Վ. Լ. Վելիչկօն վերջին երեք տարին անցկացրեց Պետերբուրգում, ուր Վ. Վ. Կոմարովի հետ միասին խմբագրում էր «Ռուսակից Վեստնիկ»-ը, որը նոյն նացիոնալիստական ոգով էր վարում։ Նա Ռուսական ժողովարանի հիմնադիրներից մէկն էր։

—Երկրագործութեան և պետական կալուածների պ. մինիստրի կարգադրութեամբ 1899 թւականից Կովկասում որոշուում են այն հողերը, որոնք պէտք է յատկացնուեն Ռուսաստանի ներքին նահանգներից եկող ոռու գաղթականներին։ Մինչև 1903 թւականը Կովկասում այդ նապատակով յատակագծի վրայ է հանուած 384,000 դեսետին պիտանի հող, որոնց լրայ պէտք է 145 առանձին գաղթական կէտեր հիմնուեն։ 1903 թւականին Բագուի, Գանձակի, Թիֆլիսի և Երևանի նահանգներում և Կարսի շրջանում հանուած է 671,887 տարածութեան յատակագիծ, որոնցից կազմելու են նոյն նպատակով 32 գաղթական բաժիններ։ Բայց այդ, այդ կողմերի և Դաղստանի արօտամասերում որոշուած է 36,000 դեսետին հող, որ պիտանի է նստակեաց կեանքի համար, դարձեալ պէտք է ոռու գաղթականերին յատկացնուի։

—Երևանից Թիֆլիսի թերթերին հեռագրում են. «Յունուարի 23-ին Երևանի նահանգական դատարանը լսեց Աշտարակ

գիւղի երեք հայ բնակիչների գործը՝ Նրանք մեղադրում էին 263-րդ յօդուածի հիման վրայ. Նախագահում էր դատարանի նախագահ Բակլալօն, անդամներն էին Մատուսելիչ և Լեսկով, մեղադրում էր դատախազի օգնական Տակոչեւը. պաշտպանում էին Մալեանտովիչը՝ Մոսկուայից և Յովհաննիսեանը՝ Թիֆլիսից. Դռնբաց յայտարարուած վճռով 263-րդ յօդուածը մերժուեց: Բոլոր 3-ն էլ դատապարտուեցին 271-րդ յօդուածի համաձայն՝ 6 ամիս բանտարկութեան, առանց իրաւոնքների սահմանափակումից:

«Երևանի նահանգական դատարանում յունուարի 19—22 քննում էր Ղամարլու գիւղի 17 հայերի գործը, որոնք մեղադրում էին 263-րդ յօդուածի հիման վրայ. Նախագահում էր դատարանի նախագահ պլ. Բակլալօն, անդամներն էին պլ. պլ. Պիցխելապուրի և Գելերդով. դատախազն էր պլ. Գլագոլեւ. պաշտպանում էին փաստաբաններ՝ պլ. Մալեանտովիչ (Մոսկուայից) և պլ. պլ. Խոմենդովսկիյ, Խախուտով և Յովհաննիսեան—Թիֆլիսից). Դռնբաց վճռով մերժուած է 263-րդ յօդուածը: Երեք հոգի դատապարտուած են 271-րդ յօդ. հիման վրայ կալանաւորների բաժնում մնալու, 1-ը 2 տարի, երկուսը —երկու տարի և ութիւ ամիս: Մնացածները դատապարտուած են պատժական օրէնքի 38-րդ յօդուածի 3-րդ մասի հիման վրայ՝ 3-ը—մէկ ու կէս ամիս, 11-ը—երկումկէս ամիս բանտարկութեան ոստիկանատամնը»:

—Շուշուց «Մշակ»-ին գրում են. «Յունուարի 24, 25 և 26-ին նահանգական դատարանը քննում էր ուսանող երկրաշափ Մատուրեանի, Շուշի քաղաքացիներ Ղահրամաննեանի ու Դանիէլեանի և պարսկահպատակ Մահակեանի գործը. Նրանք մեղադրում էին պատժական օրէնքրքի 263, 9 և 2 մասի 1459 յօդուածների հիման վրայ: Առաջին երեքին դատարանն արդարացրեց, իսկ Մահակեանին դատապարտեց 8 ամիս բանտարկութեան: Նախագահում էր Գանձակի նահանգական դատարանի անդամ Դաւիդովը, մեղադրում էին պրոկուրորի օգնական Կալվայտիսը և Վասիլեւը. պաշտպանում էին Մոսկուայի երգուեալ հաւատարմատար Ստալ և Թիֆլիսի երգուեալ հաւատարմատարի օգնական Ղորդանետն: Դատարանի վճիռը յայտնուեց դռնբաց»:

### Բարձրագոյն Հրամաններ

—Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետին Բաթում քաղաքի բնակիչների համար առողջապահութեան վերաբերեալ պարտադիր որոշումներ հրատարակելու եւ այդ որոշումները խախտելու մէջ յանցաւըներին

պատժի ենթարկելու առանձին լիազօրովթիւններ տալու մասին։ Ներքին գողծերի մինխստրութիւնը՝ մինխստրների կոմիտէին ներկայացրած իր առաջադրութեամբ ենթադրում էր, Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ իբրև ժամանակաւոր միջոց՝ հինգ տարով՝ իրաւունք տալ. 1) հրատարակել Բաթում քաղաքի բնակչինների համար պարտադիր որոշումներ առողջապահական բաժնի վերաբերեալ և այդ որոշումները խախտելու մէջ յանցաւորներին ենթարկել աղմինխստրատիւ կարգով դրամական տուգանքի մինչև հինգհարիւր ըուբլի կամ մինչև մի ամիս բանտարկութեան, և 2) Բաթումի շրջանի նահանգապետին լիազօրովթիւն տալ՝ 1 կէտում յիշուած պարտադիր որոշումները խախտելուց առաջարցած գործերը տնօրինելու և այս գործերին վերաբերուղ վերը մատնացոյց արած պատիժները գործադրելու։

Մինխստրների կոմիտէն քննելով մինխստրութեան այդ առաջադրութիւնը՝ ենթադրում էր. հարցնել այդ մասին՝ առաջադրութեան համաձայն՝ Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճութիւնը։

Թագաւոր Կայսրը 1903 թւի հոկտեմբերեի 27-ին Բարձըրագոյն բարեհաճել է թոյլ տալ այդ։

—Հայ-լուսաւորչական հոգեւոր վարչութեան պաշտօնատար անծանց նշանակելու կարգի մասին։ Թագաւոր Կայսրը՝ ներքին գործերի մինխստրի ամենանպատակ զեկուցման հիման վրայ՝ 1903 թւի հոկտեմբերի 18-ին՝ Բարձրագոյն բարեհաճել է օրէնք դնել, որպէսզի մինչև հայ-լուսաւորչական դաւանութեան պատկանող քրիստոնեաների հոգեւոր գործերը վարելուն վերաբերեալ գործադրուող օրէնքները վերաքննելը՝ այդ դաւանութեան հոգեւոր իշխանութիւնները—յաջորդներ, կոնսիստորիայի անդամներ, հոգեւոր ճեմարանի և սեմինարների տեսուչներ և ուսուցիչներ, վանահայրեր, այլև քահանաներ, սարկաւագներ և դպիրներ նշանակելիս՝ ստանան հետևեալ անձանց համաձայնութիւնը. յաջորդների համար —Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետի համաձայնութիւնը, իսկ միւնների համար—տեղական նահանգապետի կամ նրան համապատասխան պաշտօնական անձնաւորութեան համաձայնութիւնը։

—«Բաեցաչ» թերթում տպուած է. ինկատի ունենալով էջմիածնի հայ-լուսաւորչական սինողի պրոկորոր պ. Ի. Խ. Կանչելիի երկարատև հիւանդութիւնը, արդարագատութեան մինխստրի կարգադրութեամբ նշանակւում է յիշած սինողի պրոկորորի պաշտօնը կատարելու համար՝ մինխստրութեան մէջ նոտա-

քի ծառայող և Գանձակի նահանգական դատարանի գլխաւոր պաշտօնը կատարելու ուղարկուած՝ նապվորնըի սովետնիկ Լ. Ա. Ֆրենկել, որ արդէն ուղևորուել է իր ծառայութեան տեղը։

—«Եցք. Ենտ.» յայտնում է, որ նամանգունեան գաւառապետ ենթգնդապետ Լ. Լ. Ինսուչն դեկտեմբերի 1-ին գրած նամակով յայտնել է ինժեներ Ա. Պ. Միխայլովին, թէ նամանգունում տարածուած է լուր, իբր թէ Ֆերգանի շրջանի Մայլիսայում արքունական հողում երևացել է նաւթիւն Դեկտեմբերի 4-ին հեռագրով ենթգնդապետ Ինսուչնը յայտնեց Միխայլովին, թէ 78 սաժէն խորութիւնից հանուած է 250 պուդ նաւթիւն։

—Յունուարի 14-ին պետական խորհրդի Բարձրագոյն հաստատուած կարծիքով որոշուած է։

Անդրկասպեան երկրները գաղթած ոռուներին նրանց տուած հողերի համար չենթարկել հարկ վճարելու ոչ գանձարանին, ոչ զեմստվօների կարիքների համար տաս տարուայ ընթացքում։ Անդրկասպեան երկրներում արդէն բնակութիւն հաստատած գաղթականների համար սկիզբ հաշւուած է 1904 թւի յունուարի 1-ից, իսկ նոր վերաբնակուողների համար— վերաբնակութեան յաջորդող տարւայ յունուարի 1-ից։

—Ենթադրում է՝ Անդրկասպեան երկրի կառավարչին իրաւունք տալ պարսկահպատակներին արտասահման վտարելու այն պատճառով, որ երկիրը բաւականաշափ լցուել է պարսիկներով, որոնք վերին աստիճանի կործանիչ ազդեցութիւն ունեն տեղական բնիկների բարոյականութեան վրայ. մանաւանդ նոր եկող պարսիկները, բացառապէս հասարակութեան տականքը, տարածում են օպիում ծխելը։ Վնասակար օտարերկրացիներին հեռացնելու իրաւունքը ներկայումս պատկանում է միայն թուրքեստանեան գեներալ-նահանգապետին։

—Բարձրագոյն ընսկրիպտ. «Մեր ֆին'անդական գեներալ-նահանգապետին։ Ամենահպատակօրէն զեկուցման հիման վրայ Մենք բարւոք համարեցինք Բարձրագոյն հրամայել, որ այն անձերը, որոնց 1903 թւի մարտի 20-ի (ապրիլի 2-ի)՝ Ֆին'անդիայում պետական կարգը և հասարակական անդորրութիւնը պահպանելու միջոցների մասին՝ Բարձրագոյն որոշման 1 յօդուածի դ. կէտի հիման վրայ արգելուած է երկրում մնալ, չօգտուեն հրապարակական, քաղաքական և հասարակական իրաւագորութիւններով, որ թոյլատրուած է ֆին'անդական անբիծ քաղաքացիներին։ Խսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով գրուած է. «Նիկոլայ, Ցար-

սկզիէ Սելօ. 1903-1904 թ. դեկտեմբերի 21-ին (յունուարի 3-ին):

—ՓՈԽՎԱՆԴԵԿԱ Գազետա-ում տպուած է. «Թագաւոր Կայսը-ը ՌԸ Կայսերական Փինլանդական սենատի 1903 թւի դեկտեմ-բերի 18-ին (31-ին) ամենահպատակօրէն առաջարկութեան հիման վրայ արտայայտել է իր անպայման կամքը, որպէսզի 1900 թւի յունիսի 7-ի (20-ի) Բարձրագոյն մանիֆեստի ճիշտ հիման վրայ սենատից ենող բոլոր թղթերը գրուած լինեն ուստերէն, Այնուհանդերձ Նորին Կայսերական Մեծութեանը հաճոյ է եղել Ամենաողորմածաբար արտօնել սենատին, որ թարգ-մաններ չունեցող հիմնարկութիւնների հետ, որոնցում ուստերէն գրագրութիւն չէ անուամ, այլև տեղական լեզուով գրած ինչպագրերով սենատին դիմող մասնաւոր անձերի հետ յարաբերութիւններ ունենալիս՝ ուստական իսկական թղթերին՝ անհրաժեշտ դէպքում՝ կցել ճիշտ թարգմանութիւնը տեղական համապատասխան լեզուով, որպէսզի թարգմանչից վաւերացրուած թարգմանութեանը կցած լինի ուստական բնագիրը, և այդպի-սով՝ «Ֆինլ'անդական Մեծ Իշխանութեան որոշումների ժողովածութիւն» հրատարակութեան կանոնների համեմատ՝ անբաժա-նելի կերպով միացած լինի իսկականի հետ: Բացի թարգման-չից չէ արգելւում այդ թարգմանութիւններն ստորագրել և՝ սենատի համապատասխան էկսպեդիցիայի իշխանաւորին: Նո-րին Կայսերական Մեծութիւնը բարեհանել է այս պարզաբա-նած կարգը մոցնել՝ որպէս ժամանակաւոր՝ Վլիբորգեան նա-հանգի պաշտօնաւողերի և բնակիչների հետ սենատը յարաբե-րութիւն ունենալիս—երկու տարով, միւս նահանդների համար հինգ տարով, հաշւելով 1903 թ. դեկտեմբերի 19-ից (1904 թ. յունուարի 1-ից): Մրանից անկախ Թագաւոր Կայսրին հաճոյ է եղել թոյլատրել սենատին՝ պաստըներ նշանակելու և նրանց պաշտօնից արձակելու թղթերն այսուհետ մինչև մի առժամա-նակ ուղարկել՝ վերը յիշածի հիման վրայ՝ ուստական բնագրի և ըստ պատշաճի վերը յիշած կարգով վաւերացրուած՝ տեղա-կան համապատասխան լեզուով թարգմանութեան հետ անբա-ժան:

—Մամուլի վերաբերեալ տեղեկութիւններ.

Դադարեցրուած է դեկտեմբերի 3-ից 8 ամսով Ռիգայում լոյս տեսնող լատիշական Deenes Lapa թերթը:

Դադարեցրուած է Ֆինլանդիայի Նիկոլայստադում հրա-տարակուող շվեդական Vasaposten լրագիրը:

Դադարեցրուած է Հովոտ և Կյորեր լրագրների հատով վաճառումը:

Երեք ամսով դադարեցրուած է Վոլոն լրագրի հրատա-  
րակութիւնը:

«Եակ» լրագրի և 20-ում տպուած է հետևեալյայտարա-  
րութիւնը. «Մրանով յայտարարուում է, որ «Եակ» թերթի հը-  
րատարակութիւնն անորոշ ժամանակով դադարեցնուում է: «Ե.  
Ազ.»-ի հետ կապած որոշ համաձայնութեամբ՝ «Եակ»-ի բա-  
ժանորդները կը ստանան «Ե. Ազ.» լրագիրը: «Եակ» թերթի  
խմբագիր-հրատարակիչ Լաւրով:»

Ներքին գործերի, ժողովրդական լուսաւորութեամ և արդա-  
րադատութեան մինիստրները և սրբազնագոյն սինոդի օքեր-  
պրակուրորը որոշեցին բոլորովին դադարեցնել Ռուսական Հանարակութիւնը: